ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԳԵՎՈՐԳ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 128-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 131-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 361-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Գևորգ Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի, 131-րդ հոդվածի 6-րդ մասի և 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2026 թվականի փետրվարի 6-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Գևորգ Սահակյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«(...) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 60, 75, 78 և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ այն չափով, որքանով չի նախատեսում բավարար, հստակ և արդյունավետ իրավական երաշխիքներ՝ փոխբացառող (ֆակուլտատիվ) հայցապահանջների պայմաններում հայցի ապահովման տարբեր միջոցների միաժամանակյա և կումուլյատիվ կիրառումը բացառելու կամ սահմանափակելու համար:

(...) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 6-րդ մասը և 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն այնքանով, որքանով չեն նախատեսում

հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորություն այն անձի համար, որի նկատմամբ կիրառվել են ապահովման միջոցները ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ2/6253/02/25 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը Սահմանադրական դատարանի առջև բարձրացնում է հետևյալ հարցադրումները.

«(...) Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման շրջանակում նախատեսված են բավարար, հստակ և արդյունավետ իրավական երաշխիքներ, որոնք իրար փոխբացառող (ֆակուլտատիվ) հայցապահանջների պայմաններում բացառում են դատարանի կողմից տարբեր հայցի ապահովման միջոցների համաժամանակյա և կումուլյատիվ կիրառման հնարավորությունը:

(...) Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 6-րդ մասի և 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իրավակարգավորումները, այնքանով որքանով չեն նախատեսում իրար փոխբացառող հայցապահանջներով հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը բողոքարկելու իրավական հնարավորություն այն քաղաքացիական դատավարության մասնակցի համար, որի նկատմամբ կիրառվել են ապահովման միջոցները, հակասում են ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին»:

Դիմողը նշում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման հետևանքով կոնկրետ գործով իր նկատմամբ կիրառվել են հայցի ապահովման մի քանի միջոցներ, որոնք փաստացի ուղղված են եղել փոխբացառող դատավարական ելքերի միաժամանակյա ապահովմանն այն դեպքում, երբ վերջնական դատական ակտով կատարման ենթակա կարող է լինել պահանջներից միայն մեկը: Ըստ Դիմողի՝ սույն պարագայում խնդիրը չի վերաբերում

դատական հայեցողության «բնականոն» իրականացման առանձին դրսևորմանը, այլ ունի նորմատիվ-կառուցակարգային բնույթ, քանի որ հենց օրենքն է թույլ տալիս նման արդյունք՝ առանց փոխբացառող պահանջների դեպքում կիրառելի հստակ սահմանափակող չափանիշների և ընթացակարգային երաշխիքների:

Դիմողի պնդմամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հայցի ապահովման միջոցների կիրառման ընդհանուր հիմքերը, հատկապես փոխբացառող (ֆակուլտատիվ) հայցապահանջների պայմաններում, չեն ուղեկցվում բավարար նյութական և դատավարական երաշխիքներով, որոնք կբացառեին կամ կսահմանափակեին հայցի ապահովման միջոցների միաժամանակյա և կումուլյատիվ կիրառման հնարավորությունը: Հավելելով՝ Դիմողը նշում է, որ տվյալ բացը հանգեցնում է սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունների, որոնք կարող են չբխել անհրաժեշտ նվազագույն միջամտության տրամաբանությունից և չհամապատասխանել Սահմանադրության 78-րդ հոդվածից բխող անհրաժեշտության և համարժեքության պահանջներին: Միաժամանակ, ըստ Դիմողի՝ նշվածը նվազեցնում է իրավական կանխատեսելիությունը և որոշակիությունը՝ հակասելով Սահմանադրության 79-րդ հոդվածին, և չի ապահովում արդյունավետ պաշտպանական մեխանիզմների առկայությունը՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի իմաստով:

Արդյունքում՝ Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է Սահմանադրության 60, 75, 78 և 79-րդ հոդվածներին և ենթակա է սահմանադրական վերահսկողության՝ կոնկրետ գործով կիրառված նորմի շրջանակում:

Դիմողը նշում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասով, 131-րդ հոդվածի 6-րդ մասով և 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված իրավակարգավորումների համադրված և համակարգային ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը վերաքննության հասանելիությունը նախատեսել է այնպես, որ գործնականում հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման նկատմամբ վերադաս դատական վերահսկողության «դուռը»

բացվում է հիմնականում հայցվորի համար այն դեպքում, երբ հայցվորի միջնորդությունը մերժվել կամ մասնակի է բավարարվել, մինչդեռ, դատավարության այն մասնակցի համար, որի նկատմամբ համապատասխան միջոցն արդեն կիրառվել է, համարժեք և արդյունավետ վերաքննիչ վերահսկողություն չի երաշխավորվում, հատկապես իրար փոխբացառող հայցապահանջներով գործերում, երբ կիրառվող միջոցների համակցումը կարող է ստեղծել ինտենսիվ և բազմաշերտ սահմանափակումներ:

Դիմողը նաև նշում է, որ թեև հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը ձևականորեն միջանկյալ դատական ակտ է, սակայն իրականում այն կարող է առաջացնել էական նյութաիրավական հետևանքներ այն անձանց համար, որոնց նկատմամբ կիրառվում է: Մասնավորապես՝ Դիմողը գտնում է, որ անշարժ գույքի նկատմամբ արգելանքի, օտարման արգելքի կամ գրավի իրացման սահմանափակման միջոցով ոչ միայն սահմանափակվում է գույքի տնօրինման իրավունքը, այլ նաև կարող է նվազել գույքի տնտեսական արժեքը, ինչպես նաև կարող են խաթարվել դրա օգտագործման հնարավորությունները և երկարատև ժամանակով ստեղծվել գույքի փաստացի «սառեցման» վիճակ: Դիմողի պնդմամբ՝ նման ծանր և շարունակական միջամտությունը պահանջում է ոչ միայն դատական հայեցողության պատշաճ իրականացում, այլ նաև կամայականությունից պաշտպանության համար բավարար ընթացակարգային երաշխիքներ, որոնց առանցքային ինստիտուցիոնալ դրսևորումն է վերադաս դատարանի կողմից միջամտության օրինականության և համաչափության անկախ ստուգման հնարավորությունը: Ըստ Դիմողի՝ այն պարագայում, երբ այդ վերահսկողությունը գործնականում անհասանելի է այն կողմի համար, որի իրավունքները սահմանափակվել են, ձևավորվում է այնպիսի համակարգ, որտեղ միջամտությունը կարող է պահպանվել երկար ժամանակ՝ առանց դրա կիրառման իրավաչափության և համաչափության վերադաս դատական ստուգման, ինչը բարձրացնում է կամայականության ռիսկը և թուլացնում է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական բովանդակությունը:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 6-րդ մասը և 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն այնքանով, որքանով չեն նախատեսում հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ

դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորություն այն անձի համար, որի նկատմամբ կիրառվել են ապահովման միջոցները, խաթարում են արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունը՝ անձին զրկելով դատական սխալի վերանայման իրական հնարավորությունից, ինչպես նաև խախտում են արդար դատաքննության՝ կողմերի իրավահավասարության և մրցակցության պահանջները՝ ստեղծելով ընթացակարգային առավելություն միայն մեկ կողմի համար, և չեն ապահովում կամայականությունից պաշտպանության բավարար ընթացակարգային երաշխիքներ՝ սեփականության իրավունքի նկատմամբ շարունակական միջամտության պայմաններում: Արդյունքում՝ Դիմողը եզրահանգում է, որ խնդրո առարկա վիճարկվող իրավակարգավորումները հակասում են Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված հիմնական իրավունքներին:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

3.1. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,* ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝*** *հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ սահմանվում են այն

հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝*** *հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված* ***այլ դեպքերում****:*

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ* ***անհատական դիմումն ակնհայտ անհիմն է****:*

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրվել է, որ *«(…) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում,* ***երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:***

(…)

անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, ***դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:***

Սահմանադրական դատարանը վերը նշված՝ ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է, որ *«(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով*

իրավաբանորեն հիմնավորել, թե ***իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (...)»:***

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ *եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դիմումն* ***ակնհայտ անհիմն է:***

Այս առումով հարկ է փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման միջև, **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքին և (կամ) ազատությանը՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի և իր համապատասխան հիմնական իրավունքի և (կամ) ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:**

Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԱՈ-126 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ *«(...) անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության անմիջական պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝* ***վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական***

իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրահիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրահիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման»:

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված իրավակարգավորումները, Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է.

անհատական դիմումի շրջանակում նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում **անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթները (սույն պարագայում նաև՝ դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացը) հանգեցրել են Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման, որը սույն պարագայում տեղի չի ունեցել:**

Մասնավորապես՝ Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի, 131-րդ հոդվածի 6-րդ մասի և 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի)՝ Սահմանադրության 60-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև 75, 78 և 79-րդ հոդվածներին համապատասխանությունը, որի կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

այսպես՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողը, վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 6-րդ մասի և 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի)՝

Սահմանադրության 60, 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ համապատասխանաբար՝ սեփականության, արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքներին համապատասխանությունը, **բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել իր՝ տվյալ հոդվածներով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի խախտման փաստը, հետևաբար և՝ վիճարկվող դրույթների (դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) և համապատասխան հիմնական իրավունքի ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը:**

Փոխարենը Դիմողը սահմանափակվել է իր՝ Սահմանադրության 60, 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված հիմնական իրավունքների խախտման վերաբերյալ պնդումների պարզապես վկայակոչմամբ՝ բավարար կերպով իրավաբանորեն չհիմնավորելով իր կողմից վիճարկվող դրույթների (դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) և նման խախտման ընդհանրությունը, դրանց միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը՝ կոնկրետ տվյալ գործի հանգամանքների և առանձնահատկությունների հաշվառմամբ:

Անդրադառնալով Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 75, 78 և 79-րդ հոդվածներին՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ տվյալ հոդվածների բովանդակությունից բխում է, որ **կոնկրետ վերահսկողության պարագայում դրանք ինքնին չեն կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող են դիտարկվել միայն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության սահմանափակման լույսի ներքո:**

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումով չի հիմնավորվում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 6-րդ մասի և 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) հակասությունը Սահմանադրության 60, 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված հիմնական իրավունքներին, հետևաբար և՝ Սահմանադրության 75, 78 և 79-րդ հոդվածներին:

Այսինքն՝ **սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, որը գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից մերժելու հիմք է:**

Ուստի՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 6-րդ մասի և 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (դրանցում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) մասով, Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ **դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

3.2. *Դիմողի կողմից բարձրացված հարցերի կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև հետևյալը.*

Ինչպես արդեն վերը վկայակոչվել է, Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված* ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,*** *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ սահմանվում են այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը****, ինչը հանգեցրել է Սահմա-*

նադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանն իր 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Այս առումով Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի՝ տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի (դրույթների) սահմանադրականության գնահատման հարցեր**:

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել են այնպիսի հարցեր, որոնք **ենթակա չեն Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով **Դիմողը, ձևականորեն վիճարկելով** ՀՀ քաղաքացիական դատավարու-

թյան օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) **սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց**:

Այսպես՝ սույն անհատական դիմումով Դիմողը, անդրադառնալով վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասին (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացին), վկայակոչել է իրավական դիրքորոշում առ այն, որ *«Վիճարկվող դրույթի կիրառման հետևանքով կոնկրետ գործով Դիմողի նկատմամբ կիրառվել են հայցի ապահովման մի քանի միջոցներ, որոնք փաստացի ուղղված են եղել փոխբացառող դատավարական ելքերի միաժամանակյա ապահովմանը, այն դեպքում, երբ վերջնական դատական ակտով կատարման ենթակա կարող է լինել պահանջներից միայն մեկը: (...)*

Սույն գործով հայցվորների կողմից, հիմնական պահանջից և որպես հիմնական պահանջի հնարավոր անվավերության հետևանք ներկայացված ածանցյալ պահանջից զատ, ներկայացվել է նաև ֆակուլտատիվ պահանջ, այն է՝ ստացվածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում պարտավորեցնել հատուցել դրա արժեքը դրամով՝ պատասխանող Գևորգ Ստեփանի Սահակյանից բռնագանձելով հօգուտ հայցվորների 39.360.000 ՀՀ դրամ, յուրաքանչյուր հայցվորին՝ 13.120.000 ՀՀ դրամի չափով: Նշված պահանջների շրջանակում դատարանի կողմից կիրառվել են հայցի ապահովման միաժամանակ մի քանի միջոցներ, մասնավորապես՝ արգելվել է երրորդ անձ Գոռ Գևորգի Մարգարյանին օտարել նշված անշարժ գույքը, ինչպես նաև արգելվել է երրորդ անձ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությանը՝ որպես գրավառու, իր գրավի իրավունքն իրացնելիս օտարել նույն անշարժ գույքը: Բացի այդ, հայցագնի՝ 39.360.000 ՀՀ դրամի չափով արգելանք է կիրառվել պատասխանող Գևորգ Ստեփանի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ»:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողն իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ԵԴ2/6253/02/25 քաղաքացիական գործով ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի բովանդակության առնչու-

թյամբ: Մասնավորապես՝ Դիմողը վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում, իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են խնդրո առարկա քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտի) իրավաչափությանը:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն դիմումով Դիմողի կողմից բարձրացված հարցերի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթի (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) սահմանադրականության գնահատում, այլ խնդրո առարկա քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կայացրած դատական ակտի իրավաչափության ստուգում, ինչը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Ուստի՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի) մասով, Սահմանադրական դատարանի կողմից **ենթակա է մերժման՝** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցերի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«Գևորգ Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի, 131-րդ հոդվածի 6-րդ մասի և

361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

20 մարտի 2026 թվականի
ՍԴԱՈ-33